ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

գ.Նոր կյանք
հեռ. (0234)-62901

27.12.2019 թ.

N 235

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ. ՍԱՐԳՍԱՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանու 23.12.2019 թվականին կայացած հերթական նիստի թիվ 19- 25-Ն որոշումների կրկնօրինակները :

Առդիր 17 / տասնյոթ / թերթ:

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատ. Ք. Մեղրակյան
Հեռ. /0234/ – 62901

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 19

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Նոր Կյանք համայնքի ավագանու թիվ 8 հերթական նիստի օրակարգը.

1.Նոր Կյանք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2.2020 թվականի համար Նոր Կյանք համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի, մշակույթի տան և <<Նոր Կյանքի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3.Տարեվերջյան գույքագրում կատարելու մասին:
4.Նոր Կյանք համայնքում նորատունկ այգիներ հիմնած սեփականատերերին հողի հարկի գծով արտոնություններ տալու մասին:
5.Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին:
6.Նոր Կյանք համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 20-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Սահմանել Նոր Կյանք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը. /Հավելվածը կցվում է/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Արարատի մարզի Նոր Կյանք
համայնքի ավագանու 2019 թ. դեկտեմբերի 23-ի
թիվ 20-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Նոր Կյանք համայնքում 2020 թվականի համար սահմանվում են տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության/տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

ա/ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ/ սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բգ/ 1001-ից մինչև 3000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բդ/ 3001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ

գ/ ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

դ/ 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

2 համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝

շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ/ բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3 համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետությանօրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

4 համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ,

5 համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ,

6 համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ քսան հինգ հազար դրամ

7 համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – վեց հազար դրամ,
- 51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – յոթ հազար դրամ,
- 101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - տասնմեկ հազար դրամ,
- 201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա -կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - տասնչորս հազար դրամ,
- 501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – քսանհինգ հազար դրամ,

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - վեց հազար դրամ,
- 51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - յոթ հազար դրամ,
- 101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - տասնմեկ հազար դրամ,
- 201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա -կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - տասնչորս հազար դրամ,

- 501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - քսանհինգ հազար դրամ,

8 իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 1 քառմ-ի համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ,
9 համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին/սաունաներին/ ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,
բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,
գ.բաղնիքների/սաունաների/ համար՝ մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ,
դ.խաղատների համար՝ երեք հարյուր հազար դրամ,
ե.շահումով խաղերի համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ,
զ.վիճակախաղերի համար՝ հիսունհինգ հազար դրամ,
10 համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է.
ա/ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հարյուր հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
-51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
-101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
-201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,
-501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնյոթ հազար հինգ հարյուր դրամ,
բ/ ոչ հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

-51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

-101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

-201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

-501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ:

11 համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր ամիս մեկ քառմ-ի համար՝

ա/ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային % / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ մեկ հարյուր իննսուն դրամ

ե/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել է և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յոթանասունհինգ դրամ

12 Նոր Կյանք համայնքի խորհրդանիշերը /զինանշան,անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ

13 համայնքի վարչական տարածքում մարդատար - տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ,

14 համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

15 համայնքի տարածքում՝

ա/ շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար տեղական վճարը՝ մեկ հազար դրամ,

բ/ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված, շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների/այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար,

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարը՝ մեկ հազար դրամ,
գ/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարը՝ մեկ հազար դրամ

16 համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարը՝ մեկ հազար դրամ,
17 համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարը՝ մեկ հազար դրամ
18 համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար տեղական վճարը՝ մեկ հազար դրամ.
19 համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարը՝ հինգ հազար դրամ
20. աղբահանության դիմաց վճար՝
ա/ բնակչից՝ 1 շնչի համար ամսական՝ մեկ հարյուր դրամ
բ/ իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից աղբահանության դիմաց վճար՝
գ/ մանկապարտեզ - երկու հազար դրամ
դ/ միջնակարգ դպրոց - երեք հազար դրամ
ե/ առևտրի և առողջապահության մատուցվող ծառայությունների դիմաց վճար՝ մեկ հազար դրամ
զ/բնակչության սպասարկման և այլ ծառայությունների դիմաց վճար՝ հինգ հարյուր դրամ
21 անասնաբույժի ծառայությունների դիմաց վճար՝
1. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ հինգ հարյուր դրամ
2. ծննդօգնություն
- թեթև միջամտություն՝ մեկ հազար դրամ
- ծանր միջամտություն՝ հինգ հազար դրամ
3. վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների՝ մեկ հարյուր դրամ մանր կենդանիներ
- իմունականխարգելիչ պատվաստումներ արյունառու՝ երկու հարյուր դրամ խոշոր կենդանիներ
կամ այլ նմուշառու կախված կենդանու տեսակից / բացառությամբ /գյուղատնտեսական կենդանիների պատվաստում/ պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների

4. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ երկու հարյուր դրամ
5. ախտահանություն 1 քառ. մետր՝ երկու հարյուր դրամ
6. միջատազերծում /դիզինսեկցիա 1 քառ. մետր՝ մեկ հարյուր դրամ
7.կրծողների ոչնչացում/ դեռատիզացիա 1 քառ. մետր՝ երկու հարյուր դրամ
8.արհեստական սերմնավորում՝ հինգ հազար դրամ
9. կենդանահերձում մանր կենդանի՝ մեկ հազար դրամ

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք. ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 21-Ն

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ <<ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

1.Սահմանել Նոր Կյանք համայնքի ղեկավարի ամսական աշխատավարձը՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2.Հաստատել Նոր Կյանքի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը համաձայն N 1 հավելվածի:
3.Հաստատել Նոր Կյանքի մշակույթի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N 2 հավելվածի:
4.Հաստատել <<Նոր Կյանքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձի չափը, համաձայն N 3 հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ
ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 - Ի ԹԻՎ 21-Ն /2 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10 / տաս /:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (<< դրամ)
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
2.Համայնքի ղեկավարի տեղակալ	1	126000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
3.Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	204000
4.Աշխատակ. գլխավոր մասնագետ /2.3-1/	1	184000
5.Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	166000
6.Աշխատակ.առաջին կարգի մասնագ. /3.2-1/	1	149000
7.Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	134000

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
8.Վարորդ	1	130000
9.Հավաքարար	1	80000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
10.Անասնաբույժ	0,5	80.000

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
23 - Ի ԹԻՎ 21-Ն /3 ՈՐՈՇՄԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8 /ութ/

1.Մշակույթի տան տնօրեն	1	*115000*
2.Գրադարանավար	1	*85000*
3.Մարզիչ	1	*80000*
4.Հնոցապան	1	*80000*
5. Հնոցապան	1	*80000*
6.Հավաքարար	1	*80000*
7.Պահակ	1	*80000*
8. Այգեպան	1	*80000*

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 - Ի

ԹԻՎ 21-Ն /4 ՈՐՈՇՄԱՆ

« ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՀԱՄՏԻՔԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքներ	*Հաստիքային դրույքաչափը (ՀՀ դրամ)*
1. Տնօրեն	1	130000
2.Դաստիարակ	2,5	128000
3.Դաստիարակի օգնական	2,2	72727
4.Խոհարար	1	80000
5.Հաշվապահ	0.5	80000
6.Երաժշտութ. դասատու	0.5	80000
7.Բուժքույր	0.5	90000
8.Տնտեսվար	0.5	80000
9.Խոհարարի օգնական	0,5	80000
10.Օժանդակ բանվոր	0,5	80000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք. ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 22-Ն

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Նոր Կյանք համայնքի տարեվերջյան գույքագրման արդյունքների ամփոփումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 23-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆԵՐ ՀԻՄՆԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Ա. Գրիգորյանի առաջարկը.

Ավագանին որոշում է.

Համայնքի ներքոհիշյալ բնակիչներին 2020 թվականից ազատել հողի հարկից՝ 5 /հինգ/ տարի ժամանակով.

1.Գասպարյան Արայիկ /ծածկագիր 0114-0005/ - 0,502 հա
2.Բայաթյան Ռադիկ /ծածկագիր 0126-0022/ - 0,515 հա
3.Ղազարյան Սերյոժա /ծածկագիր 0126-0032/ - 0,248 հա
4.Ղուկասյան Ֆրունզիկ /ծածկագիր 0118-0006/ - 0,21 հա
5.Բազյան Դավիթ /ծածկագիր 0111-0005/ - 0,503 հա
6.Աբրահամյան Կարեն /ծածկագիր 0108-0002/ - 0,435 հա
7.Աղազարյան Աշոտ /ծածկագիր 0114-0019/ - 0,151 հա
8.Դավթյան Ռաֆիկ /ծածկագիր 0113-0021/ - 0,251 հա1.
9.Խաչատրյան Արմենակ /ծածկագիր 0138-0009/ - 0,4 հա
10.Հակոբյան Ժանետա /ծածկագիր 0130-0007/ -0,137 հա
11.Գասպարյան Դավիթ /ծածկագիր 0114-0004/ - 0,3 հա
12.Կարապետյան Զոհրաբ /ծածկագիր 0113-0011/ - 0,512
13.Աբրահամյան Աննա /ծածկագիր 0204-0023/ - 0,5 հա, 1,0 հա
14.Ամիրյան Ռաֆիկ /ծածկագիր 0113-0019/ - 0,105 հա, /ծածկագիր 0113-0020/ - 0,562 հա
15.Գրիգորյան Խորեն /ծածկագիր 0110-0006/ - 0,53 հա
16.Գրիգորյան Համլետ /ծածկագիր 0110-0005/ - 0.383 հա
17.Գրիգորյան Վալենտինա /ծածկագիր 0110-0007 / - 0,53 հա

Ընդամենը 7,774 հա:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 24-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎԱՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ և ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի բ ենթակետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է.

Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու և համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար սահմանել հավելավճար իրենց պաշտոնային դրույքաչափի 5 /հինգ/ տոկոսի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, 023462901, norkyanq.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 25-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի փոփոխությունը հետևյալ տեսքով.

Ավելացնել

Եկամտային մաս

Համաձայն 22 նոյեմբերի 2019 թվականի Արարատի մարզպետարանի և Նոր Կյանքի համայնքապետարանի միջև կնքված N 17 կապիտալ սուբվենցիաներ համանքներին պայմանագրի՝

Կապիտալ սուբվենցիա համայնքներին - 4884,0 հազար դրամ

Ծախսային մաս

Պակասեցնել

Ջրային կառույցների շահագործում և պահպանում

Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում /հոդված 5113/ - 4248,0 հազար դրամ

Ավելացնել

Ջրամատակարարում

Շենքերի և շինությունների շինարարություն /հոդված 5112/ - 9132,0 հազար դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ